

ՍԱՐՈՒԽԱՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Սրանից մօտ 40 տարի յառաջ էր, որ առիթ ունեցայ նրա հետ ծանոթանալու: Տփղիսի համբաւաւոր Մանգլիս ամառանոցումն էր, ուր Թումանեան եկել էր իր ընտանիքով հանգստանալու, իսկ ես հիւր էի իմ բարեկամ Եփրեմ Ծատուրեանի մօտ: Ամբողջ 3 օր միասին էինք, այնտեղի սրահէլի ռոշաշյում (անտառակ): տանեակներով տփղիսցի ծանոթներ կայինք, որոնք խմբովին կամ մէկի կամ միւսի տունն էինք ճաշում եւ ճաշը միշտ ուրախ էր անցնում, որովհետեւ քամադան (սեղանապետը) միշտ Յովհ. Թումանեանն էր, իսկ այս դերում նա իր հաւասարը չունէր: Որքան էլ որ նրա ժողովրդական բանաստեղծութիւնները հաճելի էր կարդալ, շատ աւելի հրապուրէչ եւ զաբճեցուցիչ էին նրա «կենացներն» եւ զրոյցները:

Յովհ. Թումանեան հոչակ էր ստացել ոչ միայն մեծերի, այլ նոյն իսկ փոքրերի, երեխաների մէջ, յատկապէս իր «Շունն ու կատուն» առակովը: Շատ հայ երեխաներ ամբողջապէս բերանացի դիտէին եւ արտասանում էին այդ սիրուն եւ սրամիտ առակը: Ես չեմ կարողացել մինչեւ հիմա մոռանալ, ինչ որ մի 8 - 10 տարեկան աղջիկ ինձ զարմանք եւ միանգամայն զարճութիւն պատճառեց այս պարագայում: Վերոյիշեալ Եփրեմ Ծատուրեանի աղջիկ Լուսիկն էր այդ երեխան: Ես մի փոքրիկ շուն ունէի Լուլու անունով, որ Լուսիկի սիրելին էր եւ փոխադարձաբար սիրւած էր նրանից: Երբ ամէն կիրակի օր, ինչպէս սովորութիւն ունէի, Տփղիսում, Ծատուրեանի տունն էի գնում ճաշի, Լուլուն ինձանից յառաջ էր վազում Լուսիկի հետ խաղալու համար: Մի կիրակի Յովհ. Թումանեան եւս հրաւիրւած էր այնտեղ եւ մենք ուրախ տրամադրութեան մէջ ճաշում էինք, երբ տիկին Ծատուրեան առաջարկեց, որ Լուսիկ՝ իմ կենացը Թումանեանի «Շունն ու կատուն» արտասանէ: Երեխան ի սկզբան կարմրեց, քաշեց, բայց վերջ ի վերջոյ համաձայնեց եւ սկսեց արտասանել: Ինչպէս յայտնի է, այդ առակը սկսում է այսպէս.

« Ժամանակով կատուն ճօն (դերձակ) էր,
Շունը գլխին գտակ չունէր....:

Իսկ Լուսիկ արտասանեց՝

« Ժամանակով Լուլուն ճօնէր ,

Սալուխանը գլխին դտակ չունէր... » :

Եւ այսպէս ամբողջ առակը յարմարեցրել էր ինձ եւ իմ շնիկին :

Սեղանակիցների ծիծաղն անվերջ էր . ես ապշած էի Երեխայի սրամտութեան վրա , իսկ Յովհ. Թումանեան եւս աւելի ապշած՝ շաւրունակ կանչում էր՝ « Կեցցես Լուսիկ , ապրիս Լուսիկ... » :

Մի անգամ Տիգրանում մի ընկերական , հարիւրից աւելի սեղանակիցներից բաղկացած ճաշ ունէինք , որի սեղանապետը , բնականաբար , Յովհ. Թումանեանն էր : Յանկարծ , սեղանի կէսին , նա լըռեց , բաժակը մի կողմ քշեց , մատիտ ու թուղթ հանեց զրպանից եւ սկսեց գրել : Այս պարագան անտօմոր երեւոյթ էր եւ ամէն կողմից սեղանակիցներն սկսան կանչել . « Պարոն Թամազա , մեր կոկորդը ցամաքեց » :

« Լսեցէ՛ք » , դոչեց Թամազան՝ ոտքի կանգնելով եւ սկսեց կարդալ : Մեզ բոլորին հետաքրքրող օրւայ հարցի մասին նա յանդատարատից մի յանգաւոր ոտանաւոր էր գրել տասը տողից բաղկացած , այնչափ հետաքրքրական եւ միանգամայն սրախօսութիւններով լի , որ բոլորս ծափահարեցինք եւ արտաքույ կարգի նրա կենացը խմեցինք :

Թումանեանի հոչակն իրրեւ ժողովրդական բանաստեղծի , հասել էր նաեւ Խրիմեանին : Երբ Հայրիկը Թիֆլիս եկաւ իրրեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս , ուղեց տեսնել նրան : Թումանեան այս պարագայում եւս սրամտութեամբ վարեց : Ինչպէս յայտնի է , նա բաղմանդամ ընտանիքի տէր էր . եթէ չեմ սխալւում , 11 զաւակի հայր էր : Ուստի , Հայրիկին ներկայանալու համար , նա , ինչպէս որ ինքն անձամբ պատմած է ինձ , « մի քանի զոյգ զաւակ » առնում տանում է հետը : Խրիմեան , որ համբաււոր սրախօս էր , երբ տեսնում է բանաստեղծին փոքրիկ երեխաներովը չըջապատւած , իր պարթեւ հասակը վեր բարձրացնելով՝ կանչում է . « Ադ ի՞նչ է , դուն զաւակ ունենալը բանաստեղծութիւն գրել գիտցար » :

Յովհ. Թումանեան , ինչպէս ասի , մեծ ընտանիքի հոգն ունէր իր վզին , իսկ նրա նիւթական միջոցները շատ համեստ էին : Ես ուրախ եմ , որ հնարաւորութիւն ունեցայ գէթ մասամբ օգտակար լինելու նրան այս կողմից : Մի օր նա եկել էր իմ տունս , եւ խնդրում էր , որ ես միջնորդեմ մեր նշանաւոր բարերար մեծահարուստ Աղեքսանդր Մանթաշեանիցի մօտ , որ սա օժանդակէ նրան , այնպէս ինչ-

սկսեալ նախատուած էր ուրիշ ծանօթ ազգային հեղինակներէ, ինչպէս հնազդէտ Ալ. Երեցեանցին, վերապահ Պերճ Պոռչեանցին, եւայլն: Մանթաշեանց առ հասարակ քիչ էր ճանաչում հայ հեղինակներին եւ նրանց օգնում էր միայն այն ժամանակ, երբ իր մերձաւորներէն մէկը նրա ուշադրութիւնն էր հրաւիրում այս կամ այն հեղինակը գրութեան վրա: Ես խոստացայ Թումանեանին, թէ կը միջնորդեմ նրա համար, եւ խորհուրդ տուի, որ հետեւեալ օրն իսկ գայ մեր (Մանթաշեանց Առեւտրական Տան) գրասենեակը: Նա եկաւ: Ես մըտայ Մանթաշեանցի սենեակն եւ յայտնեցի Թումանեանի խնդիրքը:

— « Ի՞նչ գործով է պարապում Յովհ. Թումանեան, հարցրեց ինձ Մանթաշեանց:

— « Նա մի մեծ ժողովրդական բանաստեղծ է, — պատասխանեցի ես:

— « Բանաստեղծ է, ուրեմն անգործ է», առարկեց Մանթաշեանց, որ սաստիկ հակառակ էր «անգործներին», ինչպէս ինքն էր ասում: Այս կերպով նա աշխատեց, ինչպէս ասում են, «գլխից րադանել»: Բայց ես ուժեղ զէնք ունէի ձեռքս յօդուտ Թումանեանի, եւ իսկոյն պատասխանեցի.

« Յովհ. Թումանեան Սայեաթ Նովայի յաջորդն է »:

Երբ այդ լսեց, Մանթաշեանց տեղից վեր կացաւ եւ ասաց.

« Ապա, թող գայ տեսնեմ »:

Սայեաթ Նովան Մանթաշեանցի ամենատիրելի հեղինակն էր: Ես չառ անգամ եմ տեսել նրան, իր տանն, իր առանձնասենեակում, բարձի վրա ընկողմանած Սայեաթ Նովան կարդալիս: Նա բերանացի գիտէր եւ չառ անգամ եռանդով արտասանում էր նրա հայերէն եւ վրացերէն տաղերը: Եւ չնորհիւ Սայեաթ Նովայի՝ Յովհ. Թումանեան այն օրը գոհ սրտով մեկնեցաւ Մանթաշեանցի գրասենեակից:

Անհրաժեշտ եմ համարում վկայել նաեւ հետեւեալը: Յովհ. Թումանեան անտարակոյս կարեւոր եւ ազգօգուտ դեր է կատարած նաեւ իրրեւ հասարակական ազգային գործիչ: Նրա անկեղծ խօսքերի եւ եռանդուն ջանքերի շնորհիւ է, որ Կովկասի ծանօթ հայ - Թրքական դժուրութիւնների ժամանակ, նրա ծննդավայր Լոռի գաւառը ազատ մնաց այդ անմիտ կռիւից եւ հայ ու թուրք զրնցի տարրերը չարտնակեցին իրենց փոխադարձ հաշտ ու խաղաղ յարաբերութիւնները: